



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ
ՋԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ջետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ Զ. լեզու և գրականություն

Ջետազոտող ուսուցիչ՝ Արմինե Ջրաչյայի Գրիգորյան

Ուսումնական հաստատություն՝ Կարմրաշենի Ա.Ասլանյանի անվան
միջնակարգ դպրոց

Ջարգ- Ինչպես են ազդում ընտանեկան կոնֆլիկտները սովորողի առաջադիմության վրա :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	3
2. Ընտանիք և կոնֆլիկտ	4
3. Ընտանիք և դպրոցական կոնֆլիկտներ	7
4. Ընտանիքի դերը սովորողի կյանքում	9
5. Դեռահասները և ընտանեկան կոնֆլիկտները	11
6. Խեղված ճակատագրեր	15
7. Կոնֆլիկտ և մարդկային անտարբերություն	16
8. Եզրակացություն	17

Ներածություն

<<Յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի>>,- մեծ մանկավարժի այս խոսքերը շատ արդիական են:

Ժամանակակից դպրոցը փորձում է ուսումնական գործընթացի մեջ ներգրավել հասարակության բոլոր անդամներին՝ նպաստելով սովորողների առաջադիմության բարձրացմանը: Աշակերտների ուսումնառության խոչընդոտ կարող են դառնալ ընտանեկան կոնֆլիկտները: Այդ կոնֆլիկտները կարող են առաջացնել ծնողների անտարբերություն երեխայի նկատմամբ: Կարող են ծանր հոգեբանական ազդեցություն ունենալ երեխայի վրա, վերջինս դառնում է անտարբեր ուսման հանդեպ: Փորձենք օգնել երեխային դուրս գալ ծանր իրավիճակներից՝ հանձնա ուսուցչի ունենալ իրեն անհատական վերաբերմունք ցույց տվող և առաջ մղող կողմի:

Երբեմն ծնողները ունենում են չափազանց մեծ սպասումներ. դրանց չիրականացման դեպքում ծնողը ընկնում է հոգեբանական ծանր վիճակի մեջ՝ անցանկալի ազդեցություն ունենալով երեխայի վրա:

Երեխային անհրաժեշտ է ոչ միայն ֆինանսական ապահովություն ,այլև ուշադրություն: Աշակերտը կարող է ուշադրություն գրավելու համար թույլ առաջադիմություն ունենալ: Ընկճվածության և ուշադրության պակասի պատճառով երեխան կարող է դառնալ անտարբեր դասերի նկատմամբ:

ընտանիք և կոնֆլիկտ

Ընտանիք բառը առաջացել է լատիներեն familia բառից, որ նշանակում է տոհմ, ցեղ: Ռուսերենում семья բառն է, որ նշանակում է սերմ, սաղմ: Հայերենում առավել ընդլայնված տարբերակ ունի . նշանակում է ընդ տանիք՝ նույն տանիքի տակ ապրող մարդիկ: ընդունված է տարբերակել ընտանիքի երկու հիմնական տեսակ՝ միջուկային և ընդլայնված: Միջուկային ընտանիքը կազմված է միայն հիմնական անդամներից՝ ամուսնական զույգից և նրանց զավակներից: Ընդլայնված ընտանիքի դեպքում կարող են լինել նաև այլ հարազատներ: Կարող են երկու միջուկային ընտանիք ապրել միասին: Հասարակության զարգացմանը զուգընթաց ավանդական նահապետական ընտանիքը փոփոխվում է և ընտանիքում կանանց դերակատարումը մեծանում է: Տղամարդու դերը որպես առաջնորդի նվազում է: Ինչն էլ երեխայի մոտ սխալ պատկերացում է ձևավորում

ընտանիքի կառուցվածքի և ընտանեկան հարաբերությունների մասին:

Պատմականորեն ձևավորված խմբերի մեջ ընտանիքը ամենակայունն է և երկար ժամանակ կմնա այդպիսին, քանի դեռ այն լավագույն ձևով բավարարում է մարդկանց բազմաթիվ համադրված պահանջմունքները: Թեև որոշ հոգեբաններ ահազանգում են ընտանիքի քայքայման մասին, բայց այսօր նկատելի է ընտանիքի զարթոնքի ու վերակազմության մի նոր շրջան: Հասարակությունը զարգանալով՝ ձգտում է իր վրա վերցնել ընտանիքի որոշ գործառույթներ, հնարավորինս թեթևացնել նրա բեռը, մյուս կողմից էլ ժամանակն է ընտանիքին տալիս նոր դերեր:

Ընտանիքը անձանց և նրանց փոխկապակցված կարգավիճակների ու դերերի ամբողջություն է: Նկատի ունենանք նաև, որ գոյություն ունեն ոչ միայն ներընտանեկան, այլև միջընտանեկան դերեր:

Ըստ Ռ. Լինտոնի <<Դերը կարգավիճակի դինամիկ տեսանկյունն է: Անհատը սոցիալական իմաստով նշանակված է տվյալ կարգավիճակին և զբաղեցնում է այն՝ այլ կարգավիճակների հետ ունեցած կապի մեջ: Երբ անհատն իրագործում է իր իրավունքներն ու պարտականությունները, ապա նա դրանով իսկ դեր է կատարում>>:

Անձինք ունենում են պաշտոնական և ոչ պաշտոնական, տարիքային, սեռային և այլ տեսակի կարգավիճակներ, և բնական է, որ նրանք ունենում են նաև համապատասխան դերեր: Միանգամայն հնարավոր է նաև առաջադրվել են դերերի տարբեր դասակարգումներ՝ կախված այն բանից, թե ինչ հատկության կամ չափանիշի հիմքով են դրանք կատարվում:

Երբ ելնում են կենսաբանական չափանիշներից, ապա տարբերում են տղամարդու, կնոջ, որդու, դստեր և այլ դերեր: Առանձնացնում են նաև տարիքային դերեր. այստեղ արդեն չափանիշն այն է, թե մարդիկ իրենց կյանքի տարիքային որ փուլում են՝ մանուկ, դեռահաս, պատանի և այլն: Հենց որ որոշվում է անձի կարգավիճակը, ծագում են նաև այն նորմերն ու սպասումները, որոնց պետք է ենթարկվի նրա համապատասխան դերային վարքը:

Կախված հասարակության պահանջից յուրաքանչյուր դերակատար ունենում է որոշակի վարքագիծ: Այդ վարքագիծին անհամապատասխանությունը առաջացնում է կոնֆլիկտներ:

Կոնֆլիկտներ- Լատիներեն conflictus(բախում, ընդհարում) կողմերի բախում, հակամարտություն, որի ընթացքում կողմերից գոնե մեկը հակառակ կողմի գործողություններն ընկալում է որպես իր սեփական հետաքրքրություններին ուղղված սպառնալիք: Իրականության տարբեր ընկալումները անհատ մարդկանց միջև առաջացնում է բախում: Այս իրավիճակը մարդու մոտ առաջացնում է սթրես: Կա-

րող է այս ամենը հանգոցնել ագրեսիայի: Նման իրավիճակում մարդը երկար գոյատևել չի կարող: Մարդը մշակում է կենսագործունեության այնպիսի քայլեր, որոնք կանխարգելում են հոգեբանական բացասական հետևանքները:

Կոնֆլիկտի հոգեբանական տիրույթը ներկայացված երկու մակարդակներով

1. Չգացմունքային մակարդակ
2. Ճանաչողական մակարդակ

Կոնֆլիկտների կարգավորումը անհրաժեշտ է սկսել կոնֆլիկտի մասնակիցների մոտ կոնֆլիկտի գիտակցման և ընկալման փոփոխությունից, կոնֆլիկտի կարգավորման հնարավոր ուղիների նկատմամբ նրանց փոխադարձ պատկերացումներից: Կոնֆլիկտային իրավիճակում կողմերը կարող են հանգել նաև ուժային լուծումների:

Ընտանեկան կոնֆլիկտներ-Ընտանեկան կյանքը մշտապես հարթ ու սահուն չի: Ամուսինների միջև հնարավոր են նաև վեճեր, որոնք կարող են ընդգրկել կյանքի տարբեր ոլորտներ՝ հաղորդակցում, նյութական բարեկեցություն, երեխանեչի դաստիարակություն և այլն:

Կոնֆլիկտները խոչընդոտում են սովորողի առաջադիմությանը: Կոնֆլիկտները կարելի է հաղթահարել առանց երեխաներին հոգեբանական վնաս հասցնելու:

Կոնֆլիկտների հաղթահարման ուղիներն են:

1. Օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների, մարդկանց փոխգործակցության, ինչպես նաև անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրում:

2. Կոնֆլիկտի կանխարգելում. սա սուբյեկտի

կառավարման գործունեության տեսակ է, որն ուղղված է կոնֆլիկտի ծագմանը խոչընդոտելուն:

3. Կոնֆլիկտի կարգավորում. սա սուբյեկտի այնպիսի գործունեություն է, որն ուղղված է կոնֆլիկտի թուլացմանը, սահմանափակմանը, մարմանը:

4. Կոնֆլիկտի լուծում. սա ուղղված է կոնֆլիկտի ավարտին:

Պրոֆեսոր Սեդրակ Սեդրակյանը կարծում է, որ հայկական ընտանիքների առանձնահատկությունը եռասերունդ լինելն է: Այժմ հայերի անցումային շրջան է՝ հինը փորձում են մոռանալ, ձևավորել նոր, եվրոպական ընտանիք, իսկ այդ նորն էլ դեռ սերմանված չէ, ինչն էլ մտահոգիչ է:

<<Երիտասարդները մեծերի փորձը չեն կիրառում, սխալվում են, իսկ այդ սխալը երբեմն կարող է լինել ճակատագրական>>,-ասում է Սեդրակյանը:

Կոնֆլիկտների լուծման համար շեշտադրումը պետք է դնել հենց կողմերի հետաքրքրուելյան վրա: Երկու անձնավորությունների դիրքորոշումները հակասակն են, սակայն եթե դիտարկենք խնդիրը նրանց հետաքրքրությունների շրջանակում, մեկին երեխայի առող-

ջութիւնն է հետաքրքրում, մյուսին ուսման առաջադիմութիւնը: Ուստի այս մոտեցումը թույլ է տալիս լուծել կոնֆլիկտը:

Մարդկային հիմնական կարիքների տեսութիւնը կոնֆլիկտի առաջացման պատճառ է համարում մարդկանց բազային պահանջմունքները: Յետևաբար կոնֆլիկտների լուծման համար առաջարկվում այդ կարիքների վերլուծությունը և բավարարումը:

Դիցուք կոնֆլիկտող կողմերից մեկը դասխոս է, ով ցանկանում է կիսվել ուսանողների հետ իր գիտելիքներով և փորձով, մյուս կողմը ուսանողն է, ով հաճախում է դասերին, սակայն սովորել չի ուզում: Այս կոնֆլիկտը կարելի է լուծել հետևյալ կերպ.

հաշվի առնելով այն, որ ուսանողը պահանջ ունի հետագայում աշխատանք գտնելու, ինչը դժվար կլինի առանց այդ առարկայի իմացության: Երբ դասախոսը օրինակներով ապացուցի, հավանաբար ուսանողը կսկսի սովորել առարկան և կոնֆլիկտը կլուծվի:

Կոնֆլիկտը սխալմամբ նույնացնում են բռնության հետ: Սակայն կոնֆլիկտի առկայությունը անպայմանորեն չի ենթադրում բռնության առկայություն:

Կոնֆլիկտը հնարավոր է, որ ունենա դրական ազդեցություն` խթանելով անձնական, սոցիալական կամ տնտեսական զարգացումը:

Օրինակ` գիտության բնագավառում գիտնականների միջև առաջ եկած կոնֆլիկտները անպայման կհանգեցնեն գիտական առաջխաղացման, քանի դեռ դրանք մասնագիտական տիրույթում են, երբ դրանք անձնավորվում են կորցնում են իրենց էֆեկտը:

Մարդիկ իրենց բնույթով շատ տարբեր են, ուստի կոնֆլիկտները միշտ առկա կլինեն:

Յետևաբան պետք չէ խուսափել դրանցից, անհրաժեշտ է բաց ճակատով առնչվել:

Կոնֆլիկտները շատ հաճախ տանում են դեպի ստեղծարար լուծումների, անձնական, սոցիալական կամ տնտեսական զարգացման, նորանոր գիտելիքների ձեռքբերման:

Այն պարագայում, երբ կոնֆլիկտները հնարավոր չէ լուծել, հարկավոր է այն մեղմել, ստեղծել միջավայր, որում կողմերը կունենան համագործակցային նորմալ փոխհարաբերություններ` անկախ նրանց միջև կոնֆլիկտի առկայությունից:

Ընտանիք և դպրոցական կոնֆլիկտներ

Դպրոցական կոնֆլիկտները հաճախ կապված են երեխաների իրար հանդեպ թյուրիմացության, խանդի, նախանձի, սոցիալական շերտավորման հետ: Երեխաները հաճախ ենթարկվում են բուլինգի: Բուլինգը ֆիզիկական, Էմոցիոնալ, սոցիալական և այլ բնույթի վնաս պարունակող գործողություն է ուղղված որևէ անհատի կամ խմբի դեմ:գոր-

ծողությունն իրականացնողները ունեն թվացյալ առավելություն: Ուշադիր ուսուցիչը և ուշադիր ծնողը կնկատեն երեխայի վարքի փոփոխությունը: Երեխան դառնում է ավելի ինքնամփոփ, կարող է հագուստի փոփոխությունն նկատվել, կարող է ագրեսիվ վարք դրսևորել: Ուսման մեջ հետընթաց ապրել: Պետք է խոսել երեխայի հոտ, պարզել պատճառները և վերացնել: Դպրոցի հիմնական առաքելությունը որակյալ կրթություն ապահովելն է: Եթե երեխան ունի պատճառներ և կրթությունը մղում է երկրորդական պլան, ուրեմն պետք է վերացնել այդ պատճառները:

Ընտանիքի և դպրոցի միջև առաջացած կոնֆլիկտը ևս կարող է ազդել երեխայի կրթության վրա :Գաղտնիք չէ ,որ աշակերտի համակրանքը ուսուցչի հանդեպ կարող է առաջադիմության բարձրացման պատճառ դառնալ: Ծնողների քննադատական խոսքը , անհարգալից վերաբերմունքը ուսուցչի նկատմամբ ,կարող է ուսուցչի հանդեպ հակակրանք առաջացնել: Ինչն էլ առաջացնում էկոնֆլիկտներ, երեխան առավել ագրեսիվ է տրամադրվում, հետևաբար տուժում է աշակերտի առաջադիմությունը:

Ուսուցիչը մարդ է, հետևաբար և սխալական : Կարող է և քննադատության արժանանալ, բայց ոչ աշակերտի ներկայությամբ: Կարելի է սեփական կարծիքը արտահայտել առանց երեխաների ներկայության:

Կարող են առավել խոր կոնֆլիկտներ առաջանալ ուսուցչի և ծնողի միջև:

Ծնողը ունի մեծ սպասումներ իր երեխայից և երբ այդ սպասումները չեն իրականանում, առաջին թիրախը ուսուցիչն է դառնում:

Մեղադրանքը ևուցչին է ուղղվում: Մինչդեռ ուսուցիչն ու ծնողը պետք է համատեղ աշխատեն ցանկալի արդյունքի հասնելու համար: Առողջ համագործակցությունը կարող է բերել ցանկալի արդյունքի: Իսկ շատ խորացած կոնֆլիկտների դեպքում ցանկալի է փոխել դասարանը կամ դպրոցը:

Սպասումներ-Կոնֆլիկտներ կարող են առաջանալ նաև սպասումների չիրականանալուց: Սպասումները դիտվում են որպես մարդկանց վարք հարուցող պատճառներից մեկը՝ ներքին դրդապատճառների ու նպատակների, ինչպես նաև այլ ներքին ու արտաքին գործոնների հետ միասին:Սպասումները լինում են՝ բացահայտ,քողարկված, գրավոր սոցիալական:

Ինչպես երևում է անվանումից, այդպես են կոչվում այն սպասումները, որոնք դրսևորվում են բացահայտ կերպով, մարդիկ դրանք չեն թաքցնում: Բացահայտ սպասումը պահանջ է, որը ներկայացվում է կա՛մ սեփական, կամ էլ ուրիշների վարքին: Այն նաև այլոց վարքին տրվող գնահատական է:

Քողարկված սպասումը թաքնված սպասումն է: Մարդկանց բազմաթիվ սպասումներ չեն դրսևորվում բացահայտ ու հստակ ձևակերպումների տեսքով: Օրինակ կոլեկտիվ աշխատանքի դեպքում դեկավարը հստակ սպասումներ ունի աշխատողներից, որը բացահայտ չի ասում :

Գրավոր սպասումները հնարավոր են միայն գիր ու գրականություն ունեցող եթևմշակույթներում: Սպասումների մի մասը գրի են առնվում հրամանների, հրահանգների, օրենքի հոդվածների և այլ ձևերով: Գրավոր սպասումները շատ ազդեցիկ են: Երբ սպասումները չեն իրականանում, մարդը փոխում է ակնկալիքները:

Երբ երեխան դպրոց է գնում , մայրը որոշ ժամանակ անց հասկանում է, որ Նրանից ակադեմիական առաջադիմություն չի կարող պահանջել: Դա արտահայտվում է բանավոր մտքերի միջոցով. « Նրանից ավելին սպասել չի կարելի. այդպիսին են նրա այդպիսին են նրա ընդունակությունները»: Ակնհայտ է , որ մի անձի տեսանելի վարքը մյուսին հոգեկանում հանգեցնում է նրա վերաբերյալ որոշակի կարծիքի և սպասումների ձևավորման: Սա սպասումների ծագման համոզիչ օրինակ է: Ինչպես մեծ Շեքսպիրն է ասել այդ մասին, որ ինքը երջանիկ է, որովհետև ինքը սպասումներ չունի: Երբ ակնկալիքները չեն իրականանում, մարդը ակամա հայտնվում է հոգեկան բարդ իրավիճակում: Երբ հաճելի իրադարձությունների է մարդը սպասում, այդ սպասումը ավելի մեծ բավականություն է պատճառում, քան բուն իրադարձությունը: Իրադարձությանը հաջորդում է հոգեկան դատարկությունը:

Ընտանիքի դերը սովորողի կյանքում

Ընտանեկան կոնֆլիկտները ծանր հետևանքներ կարող են ունենալ երեխայի անհատի ձևավորման վրա: Ծնողների ապահարզանից հետո երեխաները կարող են դառնալ անհնազանդ, իսկ դեռահաս տարիքում անդառնալի սխալներ գործել: Երբեմն ծնողները սկսում են մրցել երեխայի սիրո համար:

Թերի ընտանիքների մեծ տոկոսը ձևավորվում է հոր հեռանալու պատճառով: Ծնողներից մեկը փորձում է լրացնել մյուսի պակասը: Նման դեպքերում ընտանիքի դաստիարակչական մթնոլորտը խիստ խեղաթյուրվում է, ինչն էլ բացասաբար է անդրադառնում երեխայի վրա: Ծնողներից մեկի բացակայությունը գրկում է երեխայի՝ իր մեջ սեռի վարքագծի կարծրատիպ ձևավորելու հնարավորությունից: Ընտանիքում հոր բացակայությունը նպաստում է տղայի մոտ կանացի հատկանիշների ձևավորմանը, քանի որ նա տղամարդ-

կային վարքագծի օրինակ չունի: Նաև աղջկա համար, մայրը համատեղում է ստեղծված իրավիճակում մայրական և հայրական դերերը, որի արդյունքում ձևավորվում է հակասական հոգեւեռական զարգացում:

Ընտանիքը հանդես է գալիս որպես առաջին կրթական հաստատություն: Ընտանիքում են դրվում մարդու բարոյականության հիմքերը ձևավորվում են վարքագծի նորմեր: Ընտանիքը

-

Նպաստում է մարդու ինքնահաստատմանը, խթանում է նրա սոցիալական և ստեղծագործական գործունեությանը, իրականացնում է երեխայի սկզբնական սոցիալականացումը:

Յուրաքանչյուր երրորդ իրավախախտը ոչ լիարժեք ընտանիքից է:

Ընտանիքը անձի սոցիալականացման կարևորագույն ինստիտուտն է: Հենց ընտանիքում է մարդը ստանում սոցիալական փոխգործակցության առաջին փորձը: Որոշակի ժամանակահատվածում ընտանիքը հանդես է գալիս որպես երեխայի միակ միջավայր, ժամանակի ընթացքում ձեռք բերելով որոշակի փորձառություն: Այնուհետև երեխայի կյանքում ներառվում են այնպիսի սոցիալական ինստիտուտներ, ինչպիսիք են մանկապարտեզը, դպրոցը, փողոցը: Սակայն այդ ժամանակ էլ ընտանիքը մնում է անձի սոցիալականացման կարևորագույն, իսկ երբեմն էլ ամենակարևոր գործոնը : Ընտանիքը կարող է դիտվել որպես անձի հիմնական կյանքի ուսուցման մոդել ու ձև:

Յուրացնելով սոցիալական դերերը՝ մարդը յուրացնում է վարքի սոցիալական չափանիշները, սովորում է գնահատել իրեն կողքից և իրականացնել ինքնատիրապետում : Ոչ լիարժեք ընտանիքում դաստիարակությունը կարող է հանգեցնել սոցիալական դերերի յուրացման խախտումների և հետագայում պայմանավորվել միջանձնային շփման դժվարություններով: ,Բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ հոր բացակայությունը երեխայի կյանքում բերում է մի շարք բացասական հետևանքների: Երեխաները, ովքեր մեծացել են առանց հոր, հաճախ ունենում են հավակնությունների ցածր մակարդակ, հատկապես տղաների մոտ անհանգստության մակարդակը ավելի բարձր է, նրանց մոտ հաճախ հանդիպում են նեվրոտիկ ախտանիշներ:

Այդպիսի ընտանիքի երեխաները հաճախ դժվարությամբ են շփվում իրենց հասակակիցների հետ: Ընտանիքում տղամարդու բացակայությունը բացասաբար է անդրադառնում ինչպես առաջադիմության, այնպես էլ երեխաների ինքնագնահատականի վրա՝ կրկին հատկապես տղաների,

նրանք ավելի վատ են յուրացնում տղամարդկանց դերերն ու համապատասխան վարքագծի ոճը:

Ընտանիքը մեր հասարակության հիմքն է, և մեր ընտանիքների միջոցով է, որ մենք սովորում ենք մեր առաջին դասերը մեր մշակույթի և ավանդույթների մասին: Երբ մենք մեծանում ենք, մենք շարունակում ենք սովորել մեր ընտանիքներից, և նրանք դառնում են կենսական կապ մեր անցյալի և մշակութային ժառանգության հետ: Բացի այդ, մեր ընտանիքները մեզ տալիս են պատկանելության և ինքնության զգացում, և նրանք կարևոր դեր են խաղում մենք որպես անհատ ձևավորելու հարցում:

Ընտանիք հասկացությունը պատմության ընթացքում զգալի վերափոխումների է ենթարկվել՝ ազդելով տարբեր հասարակական, տնտեսական և մշակութային գործոնների վրա: Միջուկային ընտանիքի ավանդական մոդելից մինչև ժամանակակից տատանումները՝ ընտանեկան կառույցները հարմարվել և զարգացել են՝ ի պատասխան փոփոխվող արժեքների, ապրելակերպի և մշակութային ժառանգության:

Դեռահասները և ընտանեկան կոնֆլիկտները

Ընտանիքն առաջնային խումբ է, որովհետև նրա անդամների հարաբերությունները շատ սերտ են, հուզականությամբ և մարմնային շփումով հագեցած: Սա այն միջավայրն է, որտեղ աճում և զարգանում է երեխան:

Կարևորելով ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների դերը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա՝ մենք, հարցաթերթային հարցման միջոցով, որին մասնակցել է ընդլայնված և բջջային ընտանիքների 40 ամուսնական զույգ, բացահայտեցինք կոնֆլիկտների առաջացման հաճախականությունը:

Փաստորեն ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն ավելի հաճախ են ծագում, քան բջջային ընտանիքներում:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ:

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ:

Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը:

Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս

տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը:

Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել Ֆիդելական ծնողի՝ իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա Ֆիդելականի և Ֆիրականի՝ ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը:

Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ:

Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված:

Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամոլոխ, կաշկանդված, չչփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը:

Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում:

Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը:

Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը:

Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամոռի, ընկճված ու անտարբեր: Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր՝ բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է. 1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ, 2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար, 3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Չարաբերականորեն հանգիստ [կրտսեր դպրոցական տարիքից](#) հետո դեռահասության տարիքը չափազանց բարդ է և բուռն: Այս տարիքում զարգացումն իսկապես ընթանում է չափազանց արագ տեմպերով, հատկապես շատ փոփոխություններ դիտվում են [անձի](#) ձևավորման առումով: Դեռահասի գլխավոր առանձնահատկությունը անձնական անկայունությունն է: Չակադիր գծերը, ձգտումները, միտումները գոյակցում են միմյանց հետ՝ պայմանավորելով դեռահասի [բնավորության](#) և [վարքի](#)

հակասականությունը: Դեռահասության տարիքում շարունակում է զարգանալ ռեֆլեքսիվ **մտածողությունը**: Կրտսեր դպրոցական տարիքում ձեռքբերված օպերացիաները դառնում են ֆորմալ-տրամաբանական: Դեռահասը, վերացարկվելով կոնկրետ, ակնառու նյութից, դատում է խոսքային պլանում: Նա կառուցում է վարկածներ և ստուգում դրանք, այսինքն՝ դատում է հիպոթետիկ- դեդուկտիվ եղանակով: Ընդհանուր ինտելեկտուալ զարգացման հետ է կապված նաև **երևակայության** զարգացումը: Տեսական մտածողության հետ երևակայության մերձեցումը ստեղծագործական իմպուլս է տալիս. դեռահասները սկսում են բանաստեղծություններ գրել, զբաղվել

կառուցվածքավորման տարբեր

տեսակներով և այլն: Դեռահասի երևակայությունը, իհարկե, պակաս արդյունավետ է, քան մեծահասակինը, բայց այն հարուստ է երեխայի ֆանտազիաներից: Դեռահասի պահանջմունքները, **զգացմունքներն** ամբողջությամբ դրսևորվում են երևակայական իրավիճակում: Իրական կյանքով անբավարարվածությունը հեշտությամբ լցվում է ֆանտազիաների աշխարհում: Ընդհանրապես, երևակայում է դժբախտ, չբավարարված մարդը, և քանի որ դեռահասության տարբիում շատ են սուր, անձնային խնդիրները, երևակայությունն այս ժամանակ դառնում է կոմպենսատոր:

Իր ֆանտազիաների աշխարհի դեռահասը ոչ ոքի չի թողնում, նա կարող է կիսվել այդ ինտիմ ինֆորմացիայով միայն շատ մոտ ընկերոջ հետ: Բայց երևակայության խաղը որ միայն բավարարում է տալիս: Իր ֆանտազիաներում դեռահասը ավելի լավ է գիտակցում իր սեփական հակումները, զգացմունքները, առաջին անգամ սկսում է պատկերացնել իր ապագա **կյանքի** ուղին:

Այս բարդ շրջանում անբարենպաստ ընտանիքը կարող է դեռահասի համար ճակատագրական լինել: Երեխան կարող է անդառնալի սխալներ անել:

Կարող է ընտանիքը սոցիալապես ապահովված լինել, բայց այդ փաստը երեխայի մեջ չի սերմանում այն հավատն ու վստահությունը, որ ինքը սիրված և ընդունված է այնտեղ: Յենց նման ընտանիքներն են պարարտ հող դառնում դեռահասի վարքագծի լուրջ փոփոխությունների համար: Երեխաները դառնում են << ռիսկի >> խմբի անդամ: Այս խմբի երեխաների առաջադիմությունը նվազում է: Նրանք կարող են ունենալ, 1. Նկրոտիկ գծի

դրսևորումներ, 2.Ալկոհոլի, թմրանյութի օգտագործում, 3. Վաղածամ սեռական կապերի դրսևորումներ, 4.Մարդկային հարաբերություններում անվստահ են, բարդույթավորված:

13

Դեռահասության տարիքը՝ որպես այդպիսին, համարվում է ճգնաժամային, և նրա դրսևորումները՝ վարքային, հուզական, վերբալ, առաջինը նկատում է ծնողը: Ծնողների սուբյեկտիվության գործոնը շատ դեպքերում խթան է հանդիսանում կոնֆլիկտների և փոխհասկացվածության բացակայության :Մինչդեռ այդ դրսևորումները հանդիսանում են ինքնարտահայտման ուրույն մոդել՝ նմանվելով չմշակված քարի, որն ունի հստակ արդյունավետություն, սակայն իր տեսանելի բովանդակությամբ անընդունելի է:

Ժամանակակից անբարենպաստ ընտանիքները ունեն օգնության կարիք:

Պետք է այնպես անել, որ դեռահասների և ծնողների միջև անտարբերությունն ու հոգևոր անջր-պետը հաղթահարվի: Պետք է անկեղծ ու խոր բնույթ կրեն հոր և մոր հարաբերությունները:

Մեր օրերում ավելի են կարևորվում ընտանեկան հարաբերությունների դինամիկ զարգացման վերաբերյալ ուսումնասիրությունները, որոնք նպատակաուղղված կլինեն ներկայացնելու այնպիսի ընտանիքների փորձը, որոնց համար երեխաներ մեծացնելը, նը-րանց արժանավայել դաստիարակելն ու կրթելը դարձել են կյանքի իմաստ, անփոխարինելի արժեք:

Խեղված ճակատագրեր

Ծանր մանկություն ունեցող երեխան շատ դժվարությամբ է կարողանում կյանքը կարգավորել:

<<Կարկուտը ծեծած տեղն է ծեծում>> ասույթը իրականություն է դառ-

նում: Ծանր մանկությունը իր հետքն է թողնում երեխայի ողջ կյանքի վրա: Մանկությունից

մնացած ցավն ու կոմպլեքսները մարդու ուղեկիցն են դառնում ողջ կյանքի ընթացքում:

Երեխան օրվա մեծ մասն անցկացնում է դպրոցում:Ուսուցիչը իր վերաբերմունքով ու վար-

քով կարող է ճակատագրեր փրկել: Ուսուցչի առաքելությունը չի ավարտվում գիտելիք

հաղորդելով: Նա պետք է կարողանա թափանցել երեխայի հոգու խորքը, գտնել խնդիրը և

լուծել դրանք: Թերևս դա էլ կդառնա հետագա հաջողության գրավականը: Յուրաքանչյուր

ստացված կյանքը մեծ բավարարվածություն է պատճառում ուսուցչին: Ընտանեկան կոնֆ-

լիկտները մեծ խոչընդոտ են ուսուցչի աշխատանքի համար:

Վերցնենք երեք ընտանիք (անձնական տվյալների գաղտնիության իրավունքից ելնելով՝ անունները փոխված են) :

ունակություններով : Յինգերորդ դասարանցի Աննան այդ ընտանիքի հերթական երեխան է: Ամեն անգամ, երբ մի կերպ հաջողվում է երեխային կենտրոնացնել դասի վրա և ունենալ որոշակի հաջողություններ, ընտանիքում ծագում է հերթական կոնֆլիկտը և երեխան հայտնվում է հուսահատ վիճակում՝ կորցնելով հետաքրքրությունը ուսման նկատմամբ: Կոնֆլիկտները հիմնականում ծագում են սոցիալական վիճակի պատճառով: Արդյունքում ունենք կոմպլեքսավորված և ծնողի ուշադրությունից դուրս մնացած՝ թեև ունակ սովորող:

Յոթերորդ դասարանցի Անժելան գերազանցիկ սովորող է: Բայց ապրում է ընդլայնված ընտանիքում ,որտեղ անպակաս են կոնֆլիկտները: Դասի ժամանակ հաճախ է մտքով հեռանում դասից և մտածում իր տանը տիրող իրավիճակի մասին: Աստիճանաբար թուլանում է նրա առաջադիմությունը:

Վեցերորդ դասարանցի Սուրենի ծնողները շատ ուշադիր են երեխայի նկատմամբ: Բայց մանկամիտ մի սխալի պատճառով Սուրենը հաճախ է ենթարկվում քարկոծման, ինչն էլ նրան աստիճանաբար

նրան անդունդն է գլորում: Դպրոցը փոխելը փրկում է ևս մեկ ճակատագիր: ՈՒսուցչի մեկ տարվա բացատրական աշխատանքը լիարժեք փոխում է երեխայի վերաբերմունքը ուսման հանդեպ:

Կոնֆլիկտ և մարդկային անտարբերություն

Կյանքի իմաստը կորցրած մարդը հայտնվում է հոգեբանական ճգնաժամի մեջ: Որտեղ առկա է ճգնաժամ, այնտեղ առկա է ներքին և արտաքին կոնֆլիկտ: Ճգնաժամը կոնֆլիկտի սրման ծայրահեղ աստիճանն է: Երբ անձը ունի պահանջմունք , որը երկար ժամանակ չի բավարարվում, առաջանում է հոգեբանական կոնֆլիկտ: Ճգնաժամի վիճակի հասած կոնֆլիկտը հղի է հիվանդագին հետևանքներով:

Կոնֆլիկտի լուծման մեկ եղանակը պահանջմունքի մասնակի կամ լրիվ բավարարումն է: Բայց եթե ինչ-ինչ պատճառով դա հնարավոր չէ ուրեմն պետք է գտնենք ճանապարհ այդ պահանջմունքը վերացնելու կամ թուլացնելու: Նման ճգնաժամային իրավիճակները կարող են բացասական հետևանքներ ունենալ հատկապես դեռահասների վրա:

Երեխաները սիրում են ուշադրության կենտրոնում լինել: Ժամանակակից հասարակությունը բավականին անտարբեր է դարձել : Ն ունիսկ ծնողների բաժանությունը երեխան կարող է

ընդունել որպես անտարբերություն իր նկատմամբ: Երեխայի պահանջմունքը այս դեպքում ուշադրությունն է իր

15

նակատմամբ: Երեխան կարող է ցածր առաջադիմություն ցուցաբերել՝ գրավելով ծնողների ուշադրությունը: Երեխան ինքն իր և շրջապատի հետ մտնում պայքարի մեջ՝ ցածր առաջադիմությունը գենք դարձնելով:

Երեխան գիտակցորեն կամ ենթագիտակցորեն կարող է ինդենտիֆիկացվել որևէ անհատի հետ: Երբ այն ծնողը, որին փորձում է նմանվել երեխան, հիասթափեցնում է վերջինիս, առաջանում է ճգնաժամային կոնֆլիկտ: Երկար ժամանակ է պետք երեխային այդ վիճակից դուրս գալու համար:

Երեխայի զարգացման կարևորագույն արդյունքներից մեկը նրա սեռական նույնականության ձևավորումն է, որը հիմնվում է իր սեռին համապատասխանող սոցիալական դերերի կատարման վրա: Դեռնախադարձական տարիքում երեխան նորմալ զարգացման դեպքում հոգեբանորեն մոտենում է մոտենում է իր սեռին պատկանող ծնողին, խորապես նույնանում է նրա հետ: Տվյալ ծնողի բացակայությունը կարող է բացասական բացասակն ազդեցություն ունենալ երեխայի վրա: Երեխայի ճիշտ զարգացման համար երկու ծնողները պատասխանատու են հավասարապես:

Եզրակացություն

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ պետք է եզրակացնել, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր

ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է. 1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ, 2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար, 3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև:

Ընտանիքի անդամները սովորաբար միմյանց հետ կապված են զգացմունքային կապերով, միմյանց նկատմամբ զգում են փոխադարձ պատասխանատվություն: Ընտանիքը նաև սոցիալական ինստիտուտ է, այսինքն՝ մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձևը, որի շրջանակներում իրականացվում է մարդկանց առօրյա կյանքի հիմնական մասը սեռական հարաբերություններ, մանկածնություն և երեխաների սկզբնական սոցիալականացում, կենցաղային խնամքի, կրթական և բժշկական սպասարկման նշանակալի մաս և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

, Տաթև գիտակրթական համալիր, Հոգեբանություն և կյանք, 2010

Էջ 24-26, 12-16

Ա. Նալչաջյան, Մահվան հոգեբանություն, 1992, էջ 9-15, 17-20

Ս. Սեդրակյան , Ուրարտու համալսարան, Ընտանիքի
հոգեբանություն

Babyshop.am blog օգոստոսի 11

Մխիթար Սեբաստացի կրթահամալիր 19.12/ 2015

Առավոտ օրաթերթ 25.09.2010

Armsociology.com